**Ծառայության մատուցման հայտարարություն**

**Պաշտոն**՝ Մշտադիտարկման եւ գնահատման մասնագետ

**Կազմակերպություն**՝ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ

**Աշխատանքի վայր**՝ ՀՀ՝ Երեւան, Լոռու, Տավուշի եւ Շիրակի մարզեր

**Դիմելու վերջնաժամկետ**՝ Մայիսի 17, 2021 թ.

**Աշխատանքի տեւողություն**՝ 72 օր հետեւյալ ժամանակահատվածում՝ Մայիս, 2021 թ. – ապրիլ, 2024 թ.

**Աշխատանքի ակնկալվող մեկնարկ**՝ Մայիսի 20, 2021 թ.

**Նկարագրություն**՝ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամը, համագործակցելով «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի եւ «Էներգետիկայի հայկական գործակալություն» հիմնադրամի հետ, ԵՄ ֆինանսավորմամբ 2021թ. մարտի 1-ից մեկնարկել է «EU4ENVIRONMENT: ԿԱՆԱՉ ՀԱՄԱՅՆՔ՝ ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԱՊԱԳԱ» ծրագիրը:

Ծրագրի շրջանակում նախատեսվում է ընտրել մշտադիտարկման եւ գնահատման հմուտ մասնագետի, ով ծրագրի իրականացման ժամանակահատվածում պատասխանատու կլինի ծրագրի գործողությունների ռազմավարական եւ պարբերական մշտադիտարկման ու գնահատման համար:

**Հիմնական պարտականությունները՝**

- Ծրագրի թիմի հետ համաձայնեցնելով՝ քննարկել եւ, ըստ անհրաժեշտության, վերանայել տրամաբանական կառուցվածքի աղյուսակը, վերջնական տեսքի բերել ծրագրի հիմնական ցուցիչները՝ ԵՄ պատվիրակության հետ հաստատման համար
- Աջակցել ծրագրի յուրաքանչյուր տարվա թիրախների որոշման/վերանայման հարցում, ինչպես նաեւ մշտադիտարկման ենթարկել դրանք ծրագրի ողջ ընթացքում
- Մշակել մշտադիտարկման եւ գնահատման պլանը և ներկայացնել Ուղղորդող հանձնաժողովին հաստատման համար տարեկան կտրվածքով, ըստ յուրաքանչյուր միջոցառման մոնիթորինգի համար անհրաժեշտ ձեւաթղթերի եւ զեկույցների օրինակներ տրամադրել ծրագրային թիմին

- Ներկայացնել հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, ներկայացնել առաջարկներ
- Ծրագրի 3 գործընկերների, դաշտային անձնակազմի միջոցով վերահսկել տվյալների կանոնավոր հավաքագրումը եւ կատարել այցեր՝ տվյալների որակը պատահականության սկզբունքով ստուգումների եւ հաստատումների ենթարկելու նպատակով
- Անվտանգ եւ հասանելի ձեւով գրանցել, կառավարել եւ պահպանել մշտադիտարկման եւ գնահատման տվյալները
- Վերլուծել ցուցանիշները, ներկայացնել փոփոխությունների առաջարկներ, պատրաստել հաշվետվություններ
- Օժանդակել ծրագրի բազային պլանի եւ դրան հետեւող հարցումների մշակմանը
- Անցկացնել մշտադիտարկման եւ գնահատման դասընթաց ծրագրի ամենօրյա մշտադիտարկման հետ կապված աշխատանքներում ներգրավված աշխատակիցների և ծրագրային թիմի անդամների համար
- Իրականացնել ծրագրի առաջընթացի վերջնական գնահատում ծրագրի ավարտից հետո
- Փաստաթղթավորել քաղված դասերը եւ լավագույն գործելակերպը, մշտադիտարկման եւ գնահատման արդյունքում քաղված դասերով կիսվել ծրագրի թիմի հետ

**Պահանջվող որակավորումները՝**

- Բարձրագույն կրթություն հասարակական գիտությունների, տեղեկատվության կառավարման կամ հարակից ոլորտներում
- Առնվազն 5 տարվա մշտադիտարկման եւ գնահատման փորձ՝ սոցիալ-տնտեսական, բնապահպանական հիմնախնդիրների եւ հարակից ոլորտների հարցերի վերլուծության տեսանկյունից
- Արդյունքներին միտված/արդյունքների հիման վրա ծրագրերի մշակման եւ կառավարման փորձ՝ առնվազն 5 տարվա,
- Ծրագրերի (մասնավորապես՝ ԵՄ կամ այլ միջազգային դրամաշնորհային ծրագրերի կդիտարկվի առավելություն) մշտադիտարկման եւ գնահատման առնվազն 5 տարվա փորձ (Մշտադիտարկման եւ գնահատման պլանների եւ գործիքակազմի մշակման և իրականացման փորձ)
- Վերապատրաստումների/խորհրդատվության միջոցով աշխատակազմի կարողությունների զարգացման փորձառություն
- Անգլերենի եւ հայերենի գերազանց իմացություն
- Հաշվետվությունների պատրաստման և ներկայացման փորձ
- Թիմում աշխատելու փորձ, ժամկետներին ժամանակին արձագանքելու փորձ:

**Վարձատրություն՝** Ըստ աշխատանքային գործունեության պատմության, բայց ոչ ավելի, քան նախատեսված է ծրագրի բյուջեով:

**Ծրագրի մասին՝**

**Ծրագրի ընդհանուր նպատակն է** Հայաստանի մարզային փոքր եւ մեծ քաղաքների կարողությունների հզորացումը՝ կլիմայի փոփոխության հարմարվողականության եւ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում:

**Ծրագրի հատուկ նպատակներն են՝**

- Հայաստանի շահառու համայքներում «կանաչ» քաղաքաշինության պրակտիկայի ընդլայնում
- Շահառու համայքներում «կանաչ» կենսակերպի խթանում

**Ծրագրի թիրախային համայնքներն են՝**

- Շիրակի մարզ՝ Գյումրի, Արթիկ, Մարալիկ
- Լոռու մարզ՝ Վանաձոր, Ալավերդի, Ստեփանավան, Սպիտակ, Տաշիր, Ախթալա, Թումանյան
- Տավուշի մարզ՝ Իջեւան, Դիլիջան, Բերդ, Նոյեմբերյան, Այրում

**Ինչպե՞ս դիմել՝**

Հետաքրքրված թեկնածուները պետք է իրենց ինքնակենսագրությունը (CV) եւ հետաքրքրության նամակը (պաշտոնին համապատասխանելու հիմնավորմամբ (1 էջի սահմաններում՝ անգլերեն լեզվով) ներկայացնեն հետեւյալ էլեկտրոնային փոստի հասցեներով. arthur@armeniatree.org եւ anna@armeniatree.org ՝ վերնագրում նշելով «EU4ENVIRONMENT: ԿԱՆԱՉ ՀԱՄԱՅՆՔ՝ ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ԱՊԱԳԱ» **ծրագիր.** «Մշտադիտարկման եւ գնահատման մասնագետ**»:**

**Դիմումների վերջնաժամկետը** 2021թ. **մայիսի 17-ն** է: Ժամկետանց դիմումները չեն ընդունվելու: Հարցազրույցի կհրավիրվեն միայն Ընտրող հանձնաժողովի կողմից ներկայացված փաստաթղթերի՝ ինքնակենսագրականների և հետաքրքրության նամակի, հիման վրա ընտրված դիմորդները: Կարող են դիմել համապատասխան փորձ ունեցող եւ՛ անհատ փորձագետներ, եւ՛ կազմակերպություններ: Անհրաժեշտության դեպքում պետք է ներկայացնել նախկինում կատարված նմանատիպ աշխատանքների օրինակներ/ապացույցներ:

Դիմումների հետ կապված հարցերի դեպքում կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ +374 77 43 61 72 (Աննա Գևորգյան):

**Գնահատման մոտեցում եւ մեթոդներ**

Հանձնարարականը բաղկացած կլինի 72 աշխատանքային օրից՝ ներառելով ոլորտային այցեր Հայաստանի Լոռու, Տավուշի եւ Շիրակի մարզեր:

Պետք է կիրառվեն Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ/OECD) Զարգացման աջակցության կոմիտեի (ԶԱԿ/DAC) որակի գնահատման չափորոշիչները եւ վերջիններիս պահպանումը պետք է հասկանալի լինի գնահատման ժամանակ:

Ակնկալվում է, որ առաջարկները կլինեն իրատեսական, հստակ եւ գործնական ուղղվածություն ունեցող եւ կարող են օգտակար լինել նախագծի հնարավոր շարունակականության դիզայնի եւ մշակման համար, ինչպես նաեւ համապատասխան (ոլորտային) աշխատանքային խմբերում նմանատիպ ծրագրերի մշակման եւ միասնական ուսուցման համար:
Տվյալների հավաքագրման համար տարբեր մեթոդներ են առաջարկվում՝ գնահատման երկու փուլերում օգտագործելու համար.

- Փաստաթղթերի վերլուծություն, որոնք կտրամադրվեն նախագիծն իրականացնող գործընկերների եւ շահառուների կողմից
- Որակյալ հարցազրույցներ տարբեր շահագրգիռ կողմերի հետ
- Ֆոկուս խմբերի հետ քննարկումներ/ հարցազրույցներ

Ակնկալվում է, որ թիմը հարցազրույցներ կանցակցնի առանցքային շահագրգիռ կողմերի հետ: Հարցման մասնակիցների թիվը կհստակեցվի մոնիթորինգի եւ գնահատման պլանի մշակման ընթացքում: Դրանցում կներգրավվեն՝

- Շահառու կոոպերատիվների ներկայացուցիչներ
- Տեղական ինքնակառավարման մարմինների եւ մարզային/համայնքային մարմինների ներկայացուցիչներ
- Իրականացնող գործընկերների ներկայացուցիչներ

Որոշ հարցազրույցներ, հավանաբար, հնարավոր կլինի կազմակերպել ֆոկուս խմբերի քննարկումների միջոցով:

**Ժամանակացույց**

| **Գործողություն/գործընթաց** | **Ամսաթիվ** |
|---|---|
| Մրցույթի բացում | Մայիսի 3, 2021 թ. |
| Մրցույթին մասնակցող հայտատուների դիմումների քննարկում եւ հանձնաժողովների որոշում | Մայիսի 18, 2021 թ. |
| Պայմանագրի կնքում | Մինչեւ մայիսի 20, 2021 |
| Մոնիթորինգ եւ գնահատում | Մարտի 1, 2021 թ. – Մարտի 30, 2024 թ. |

| | |
|---|---|
| Զեկույցի նախագծի ներկայացում | Մինչեւ ապրիլ 20, 2024 թ. |
| Նախնական զեկույցի ներկայացում | 2024 թվականի ապրիլի 20-ին հաջորդող շաբաթվա ընթացքում (ամսաթիվը կորոշվի M&E ներկայացուցչի/ընկերության այլ շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցության արդյունքում) |
| Հետադարձ կապի հավաքագրում | 2024 թվականի ապրիլի 30-ին հաջորդող շաբաթվա ընթացքում |
| Վերջնական զեկույցի ներկայացում | Մայիսի 03, 2024թ. |

## Service provision announcement

**Position:** Monitoring and Evaluation Specialist/Officer

**Organization:** Armenia Tree Project Charitable Foundation

**Post Location (s):** RA: Yerevan, Tavush, Lori and Shirak marzes

**Application deadline:** May 17, 2021

**Employment:** 72 days in the following period: May, 2021 – April, 2024

**Expected start date**: May 20, 2021

**Description**: The ATP Charitable Foundation, in cooperation with the Jinishian Memorial Foundation and the Armenian Energy Agency Foundation has launched the EU4Environment: "Green community - resilient future" project financed by the EU on March 1, 2021.

Within the framework of the project, it is planned to recruit an experienced Monitoring and Evaluation Specialist who will be responsible for the strategic and periodic monitoring and evaluation of project activities during the implementation period.

**Main Responsibilities:**

- In coordination with the Project team discuss and, if necessary, review the log frame, finalize the key project indicators for approval with the EU Delegation;
- Contribute to defining/reviewing the project targets for each year, and monitor them throughout the duration of the project;
- Develop the project monitoring and evaluation plan in consultation with the project team, and submit it to the steering committee for approval on an annual basis;
- Provide the implementing team with necessary report/form templates for monitoring each of the events/activities;
- Submit reports on the work done, as well as proposals if necessary;
- Supervise regular data collection through the 3 project partners, field staff and perform site visits to ensure quality of the data by random verifications and validations;
- Record, manage and preserve monitoring and evaluation data in a safe and accessible way;
- Analyze indicators, make change recommendations, prepare reports;
- Contribute to the design of the project baseline and follow-up surveys;
- Conduct M&E training/consultancy for the project team and project staff involved in day-to-day monitoring of the project;
- Implement the project progress evaluation after the project completion;
- Document the lessons learned and best practices, share learning from M&E process with the project team.

**Required qualifications:**
- University degree in social sciences, information management or in related fields;
- At least 5 years of experience in monitoring and evaluation with a background and interest in the analysis of socio-economic, environmental issues and related policy matters;
- At least 5 years of experience in results-based programme development and management;
- At least 5 years of practical experience in project monitoring and evaluation (particularly, EU or other international donor projects);
- Experience in development and implementation of M&E plan and M&E tools;
- Ability to provide training and build capacity of relevant staff;
- Proficiency in English and Armenian;
- Experience in preparing and submitting reports;
- Teamwork experience;
- Experience in meeting the deadlines;

**Remuneration**: According to the salary history, but not more than budget by the project.

**About the Project**

**Overall objective:** Increased environmental protection and climate change adaptation capacities of Armenia’s small regional cities and towns.

**Specific objective(s):**

1. Advanced green urban planning capacities in the beneficiary regions of Armenia;

2. Green lifestyle promoted in target regions.

**Targeted municipalities of the project:**
- **Shirak region** - Gyumri, Artik, Maralik,
- **Lori region** - Vanadzor, Alaverdi, Stepanavan, Spitak, Tashir, Akhtala, Tumanyan,
- **Tavush region** - Ijevan, Dilijan, Berd, Noyemberyan, Ayrum.

**How to apply?** Interested candidates can submit their CV and Cover letter (within 1 page, in english) to the following email addresses: arthur@armeniatree.org and anna@armeniatree.org, mentioning "“EU4ENVIRONMENT: GREEN COMMUNITY –RESILIENT FUTURE” – Monitoring and Evaluation Specialist" in the subject line.

**The deadline for applications is May 17, 2021.** Overdue applications will not be accepted. Only the shortlisted applicants will be invited for an interview. Both individual experts and organizations with relevant experience are eligible to apply. If necessary examples/evidence of previously performed similar work should be provided.

For questions related to applications, you can call (+374) 77 43 61 72 (Anna Gevorgyan)

**Evaluation approach and methods**
The assignment would consist of 72 working days with field visits to Lori, Tavush and Shirak marzes of Armenia.
The OECD DAC Evaluation Quality Standards are to be applied and the compliance of the latter needs to be comprehensible in the evaluation.
It is expected that the recommendations are realistic, concrete and practice-oriented and could be helpful for the design and elaboration of a possible continuation of the project, as well as for the development of similar interventions and joint learning in relevant (sector) working groups. For data collection different methods are suggested to be used during the two evaluation phases:
- Analysis of the documents which will be provided by Project implementing partners and beneficiaries
- Qualitative interviews with different stakeholders
- Focus group discussions/interviews

The team is expected to interview key stakeholders. The number of survey participants will be clarified during the development of the monitoring and evaluation plan: It will involve:
- Representatives of the beneficiary cooperatives
- Representatives of local self-governments and provincial/municipality
- Representatives of implementing partners

Some interviews could be probably organized via focus group discussions.

**Timetable**

| **Activity/Procedure** | **Date** |
|---|---|
| Open tender | May 3, 2021 |
| Review of proposals from tender applicants and decision of the committee | May 18, 2021 |
| Award of contract | Before May 20, 2021 |
| Monitoring and evaluation | March 1, 2021 – March 30, 2024 |
| Submission of the draft report | Before April 20, 2024 |
| Presentation of the draft report | During the week commencing April 20, 2024 (the date will be determined in consultation with the M&E officer/Company other interested parties). |
| Incorporation of feedbacks | During the week commencing April 30, 2024 |
| Submission of final report | May 03, 2024 |